ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

21.07.2014թ.

գ.Գետաշեն

21.07.2014 թ. տեղի ունեցավ Գետաշեն համայնքի ղեկավարի 2014թ. 1-ին կիսամյակի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվության ներկայացումը:

Ժողովին մասնակցում էին մոտ 68 մարդ, ավագանու անդամներ, բուժ. աշխատողներ, գյուղապետարանի աշխատակիցներ, մանկավարժներ:

Հաշվետու ժողովին ներկա էր Արմավիրի մարզպետարանի աշխատակից Ա. Հովհաննիսյանը:

Գյուղապետ Գ. Հովհաննիսյանի կողմից համայնքի բնակիչներին տեղեկացվեց համայնքում կատարված աշխատանքների ընթացքը, ցրտահարության և կարկուտի հասցրած վնասների հաշվարկման հետ կապված աշխատանքների և այլ նախագծերի մասին:

2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համեմատած 2013թ. նույն ժամանակահատվածի հետ հատկապես սեփական եկամուտների գծով պակասել է հավաքագրման մակարդակը պայմանավորված ցրտահարության հասցրած վնասներով:

6 ամսների տվյալներով համայնքի բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է հետևյալ կերպ՝

ա/ հողի հարկ 4939.3 հազար դրամի դիմաց 1129.7 հազար դրամ կամ 22.9%

բ/ գույքահարկ 1300,3 հազար դրամի դիմաց 1386.3 հազար դրամ կամ 106.6 %

գ/ վարձակալական վճարներ 845.8 հազար դրամի դիմաց գանձում չի կատարվել:

դ/ տեղական տուրքեր՝ ոգելից խմիչքի և ծխախոտի վաճառքի թույլտվություններ 54.1 հազար դրամի դիմաց 55.8 հազար դրամ կամ 103.1%,

ե/ պետության կողմից դոտացիա 14126.1 հազար դրամի դիմաց 14126.1 հազար դրամ կամ 100%

Ծախսային մասը կատարվել է հետևյալ կերպ՝

ա/ աշխատավարձի վճարում 8927.4 հազար դրամ

բ/ ընդհ. բնույթի ծախսերի և ծառայությունների ձեռք բերում 5886.3 հազար դրամ

գ/ սոց օգնության վճարում 1300.0 հազար դրամ:

2014 թվականի ընթացքում աշխատավարձի և եկամտային հարկի պարտք չի գոյացել:
Համայնքի ղեկավարը բնակիչներին տեղեկացրեց, որ ցրտահարության հետևանքով վնասվել է համայնքի՝

1/ ծիրան 25.2հա - 100%

2/ ընկույզ, սալոր, այլ 26.3 հա - 100%

Ընդամենը՝ 51.5 հա:

Նա նշեց, որ կառավարությունը փոխհատուցել է 51.5 հա ցրտահարված բազմամյա տնկարկների հողի հարկի գումարները 100%-ով՝ 1129685 դրամ:

Ջրի վարձը փոխհատուցել է 50 %-ի չափով, <Արաքս> ՋՕԸ- ի ջրօգտագործողներին՝ 18.42հա-ի չափով 709170 դրամ, <Մերձափնյա> ՋՕԸ-ի ջրօգտագործողներին՝33.08հա-ի չափով 1273580դրամ, ընդամենը 1982750 դրամ:

Համայնքի 29 ընտանիքներ, որոնք տուժել են ցրտահարությունից և սոցիալապես առավել անապահով են, կառավարության կողմից հատկացվելու է դրամական օգնություն: Համայնքի 34 ընտանիքների տրամադրվել է ձմերուկի, պոմիդորի, վարունգի, սեխի սեմացու: Համայնքի ղեկավարը բնակիչներին տեղեկացրեց, որ օգնությունները լինելու են շարունակական:

2014 թվականի հունիս ամսից սկսած ջրի սակավության հետ կապված համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ ՋՕԸ-երի աշխատակիցների հետ կազմվել են ջրի հերթերի ցուցակներ՝ ջրի անկորուստ օգտագործման համար:

Համայնքի ղեկավարը նշեց, որ ինչպես ամեն տարի այս տարի ևս Մարտի 8-ին համայնքի բոլոր կին թոշակառուներին, բուժաշխատողներին բյուջեի մուտքերի հաշվին տրամադրվել է նվերներ, Կազմակերպվել է հունիսի 21-ի՝ Բուժաշխատողի օրվան նվիրված միջոցառում, որը լուսաբանվել է <Արմենիա> հեռուստատեսության կողմից: Նշվեց նաև, որ շարունակելու է բարեկարգել և ավազապատել ներհամայնքային ճանապարհների մնացած մասը, ինչպես նաև հանդամիջյան ճանապարհների հարդեցման և հողալցման աշխատանքները:

Բյուջեի նախորդ տարիներին տնտեսված սեփական եկամուտներից հատկացվել է ֆոնդային բյուջեին համայնքի խմելու ջրի ներտնտեսային ցանցը ընդլայնելու համար:

2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի բյուջեից 50.0 հազարական դրամ է հատկացվել համայնքի 23 ընտանիքների, որտեղ մահ է գրանցվել:

2014 թվականին համայնքի բնակիչներից ստացված՝ 37 դիմում-բողոքներ քննարկվել են և տրվել են համապատասխան լուծումներ և պատասխաններ: 2014 թվականին համայնքը ստացել է՝ 34 պաշտոնական գրություն, որոնց պատշաճ կերպով և ժամկետներում տրվել են պատասխաններ: Անցկացվել է ավագանու 4 նիստ, կայացվել է 23 որոշում: Արձանագրվել է համայքնի ղեկավարի 8 կարգադրություն, կայացվել է համայնքի ղեկավարի 5 որոշում:

Առողջապահության բնագավառում կատարվել են հետևյալ աշխատանքները:

Բուժ անձնակազմի և գյուղապետի անմիջական մասնակցությամբ հսկողություն է սահմանվել խմելու ջրի վթարների, խորքային հորերի քլորացման և կենցաղային աղբի հեռացման հարցերում: Գետաշենի բուժ ամբուլատորիայում գրանցված բնակչության թիվը կազմում է 2605 մարդ, 2014 թվականի 1-ին կիսամյակում բուժամբուլատորիա հաճախումների թիվը կազմել է 2366 մարդ, որից 228-ը երեխաների հաճախումներն են: Գրանցվել է 367 տնային կանչեր, պրոֆիլակտիկ նպատակներով ապասարկվել է 851 մարդ: Գետաշենի բուժամբուլատորիայում գործում է ընտանեկան բժշկություն, որը մշտապես գտնվում է համայնքի ղեկավարի անմիջական հսկողության ներքո:

Նա նշեց, որ համայնքում առկա հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն սեփական եկամուտների հավաքագրմամբ, որի վրա խիստ ուշադրություն է դարձնելու և լինելու է հետևողական:

Համայնքում առկա հիմնախնդիրներն են՝

1/ Մանկապարտեզի վերագործարկում:

2/ Խիստ անհրաժեշտ է հիմնովին վերանորոգել խմելու ջրի ներքին ցանցը՝ որը 1965 թ. է շահագործվել և գտնվում է անմխիթար վիճակում:

3/ Մշակույթի տան հիմնանորոգում:

4/ Համայնքի ընդհանուր գազաֆիկացում:

Գետաշեն համայնքի ղեկավար՝ Գ. Հովհաննիսյան